Next Level 3000	Next Level 4000	Next Level 5500	Next Level 7500
3000 Դ	4000 Դ	5500 Դ	7500 Դ
1500 րոպե տեղական բոլոր ցանցեր, ԱՄՆ և Կանադա	500 րոպե տեղական բոլոր ցանցեր, ԱՄՆ և Կանադա	3000 րոպե տեղական բոլոր ցանցեր, ԱՄՆ և Կանադա	Անսահմանափակ րոպե տեղական բոլոր ցանցեր, ԱՄՆ և Կանադա
20 ԳԲ + N	Անսահմանափակ*	Անսահմանափակ*	Անսահմանափակ

-	-	100 ՄԲ ռոումինգում**	200 ՄԲ ռոումինգում**
300 SMS տեղական բոլոր ցանցեր	500 SMS տեղական բոլոր ցանցեր	500 SMS տեղական բոլոր ցանցեր	1000 SMS տեղական բոլոր ցանցեր
3000 դրամ բացասական հաշվեկշիռ	5000 դրամ բացասական հաշվեկշիռ	5000 դրամ բացասական հաշվեկշիռ	10000 դրամ բացասական հաշվեկշիռ
Անվճար շարժական TV			

Ucom-ի Next Level հետվճարային ամսական բաժանորդագրության հետ Դուք միշտ վճարում եք ծառայություններից օգտվելուց հետո: Յուրաքանչյուր ամիս Դուք վճարում եք

Ձեր սակագնային պլանին համապատասխան ամսավճարը և նախորդ ամսվա ընթացքում հավելյալ օգտագործած ծառայությունների գումարը:
Ամսավճարում ներառված րոպեները, ՄԲ-երը կամ SMS-ները Ձեր հաշվին փոխանցվում են յուրաքանչյուր ամսվա 1-ից, որի համար պետք է վճարեք մինչև հաջորդ ամսվա 20-ը:
Տվյալ ամսվա ընթացքում չօգտագործված ներառված րոպեները, SMS-ները և ՄԲ-երը հաջորդ ամիս չեն փոխանցվում:
Եթե ամսվա ընթացքում օգտագործում եք Ucom-ի այլ ծառայություններ կամ ավելին, քան Ձեր ամսական ներառումները, ապա գանձումը կատարվում է Ձեր հաշվեկշռից:
Բացասական հաշվեկշռի չափը սահմանվում է համաձայն Ձեր ընտրած սակագնային պլանի. որքան մեծ է սակագնային պլանի ամսավճարը, այնքան մեծ է բացասական հաշվեկշռի չափը: Եթե սակագնային պլանով նախատեսված բացասական հաշվեկշիռը Ձեզ չի բավարարում, 3 ամիս Ucom-ի բաժանորդ լինելուց հետո կարող եք դիմել այն վերանայելու համար՝ լրացնելով համապատասխան դիմում Ucom-ի ցանկացած սպասարկման սրահում: Ucom -ն իրավունք ունի մերժելու Ձեր բացասական հաշվեկշռի վերանայման պահանջը՝ իր ողջամիտ հայեցողությամբ, եթե Դուք չեք բավարարում Ucom -ի կողմից սահմանված վճարունակության պահանջներին:

Սակագնային պլան	Բացասական հաշվեկշիռ
Next Level 3000	3000
Next Level 4000	5000
Next Level 5500	5000
Next Level 7500	10000

Սակագները պլանի ներառումները սպառելուց հետո՝

զանգեր Ucom շարժական ցանցում	0 դրամ/րոպե
զանգեր դեպի տեղական այլ ցանցեր	15 դրամ/րոպե
շարժական ինտերնետ	15 դրամ/ՄԲ
շարժական ինտերնետ ռոումինգում	համաձայն այդ երկրում տվյալ օպերատորի գործող սակագնի
SMS դեպի տեղական ցանցեր	15 դրամ/SMS
SMS դեպի միջազգային ցանցեր	20 դրամ/SMS

Բացասական հաշվեկշռի սահմանաչափը գերազանցելու դեպքում հնարավոր կլինի օգտվել միայն Ձեր սակագնային պլանում ներառված շարժական ինտերնետից և SMS-ներից: Մնացած ծառայություններից կամ ամսական ներառումներից (այդ թվում՝ Ձեր սակագնային պլանում ներառված և չօգտագործված րոպեներից, ռոումինգի համար նախատեսված շարժական ինտերնետից) օգտվելու համար անհրաժեշտ կլինի մարել ամսավճարի պարտքը, եթե առկա է, և վերալիցքավորել հաշիվը:
Որպես Ucom Հետվճարային ծառայության բաժանորդ, Դուք կարող եք իրականացնել չընդհատվող սեսիա(ներ) (զանգ, SMS, ինտերնետ, ինչպես Հայաստանում, այնպես էլ ռոումինգում): Ձեզ անհարմարություն չպատճառելու նկատառումով, անգամ եթե նման սեսիայի ժամանակ սպառել եք գումարային սահմանաչափը, Ucom-ը չի ընդհատի Ձեզ մատուցվող ծառայությունը, և գումարային սահմանաչափը գերազանցող պարտքի համար գանձումը կիրականացվի ավելի ուշ Ձեր հաշվից: Նկատի ունեցեք, որ Դուք պատասխանատվություն եք կրում առաջացած բոլոր պարտքերի վճարման համար:

Անսահմանափակ ինտերնետ
Next Level սակագնային պլանը հնարավոր է օգտագործել միայն հեռախոսով: Ինտերնետի տարածումը և դրա օգտագործումն այլ սարքավորումներից (Tethering) կարող է սահմանափակվել:
*Բարեխիղճ օգտագործման սկզբունքի համաձայն Ucom-ը հնարավորություն է ընձեռում բոլոր բաժանորդներին հավասար օգտվել որակյալ շարժական կապի ծառայություններից:

Եթե վավերականության 30 օրվա (հետվճարայինի դեպքում՝ 1 ամսվա) ընթացքում Դուք գերազանցել եք 200 ԳԲ շեմը, մաքսիմալ հասանելի արագությունը կսահմանվի 512 Կբիթ/վրկ: Կանխավճարային սակագնային պլանի դեպքում այդ արագությունը կգործի մինչև վավերականության ժամկետի ավարտը, իսկ հետվճարայինի դեպքում՝ մինչև հաջորդ ամսվա 1-ը:
Այդ արագությունը բավարար է, որպեսզի Դուք լիարժեք օգտվեք սոցիալական ցանցերից, մեսենջերներից և մի շարք այլ ծառայություններից:
Դուք կշարունակեք օգտվել ինտերնետից առանց մեգաբայթերի գանձման:
Առանց ինտերնետի սպառման հավելվածներ
Նշված կայքերից ու հավելվածներից օգտվելիս հնարավոր է ինտերնետային այլ ռեսուրսների հետ տվյալների փոխանակում, որի համար գանձումը կկատարվի համաձայն սակագնային պլանի:
Խորհուրդ է տրվում օգտվել նշված հավելվածների թարմացված տարբերակներից, այլապես օգտագործման ընթացքում Ձեր հաշվից կարող է գումար գանձվել՝ ընթացիկ սակագնային պլանին համապատասխան:
Ի լրումն նշված հավելվածների առանց ինտերնետի մեգաբայթերի սպառման Ձեր Next Level փաթեթով հասանելի են լինելու www.ucom.am կայքը, ArCa և Ucom հավելվածները, ինչպես նաև մի շարք կրթական կայքեր, ինչպիսիք
են www.kahoot.com, www.etwinning.net, www.emis.am, www.armedu.am, www.e-school.am:
** Ճարժական ինտերնետ ռոումինգում
Next Level 5500 և Next Level 7500 սակագնային պլանի բաժանորդներին ամեն ամիս կտրամադրվի ինտերնետի ծավալ ռոումինգում՝ 65-ից ավելի երկրում օգտագործելու համար: Ներառված ինտերնետի ծավալը հնարավոր է օգտագործել ստորև նշված երկերներում համապատասխան օպերատորին միանալիս: Հաշվի առեք, որ ռոումինգում ինտերնետից օգտվելու ժամանակ ներառումը սպառելուց հետո կապը չի ընդհատվի և կշարունակեք օգտվել ինտերնետից համաձայն այդ երկրում տվյալ օպերատորի՝ ռոումինգում գործող ինտերնետի սակագնի:
Ճարժական ինտերնետ ռոումինգում առաջարկին հասանելի երկիր/օպերատոր

- Ալբանիա Vodafone
- ԱՄՆ T-Mobile, AT&T և Limitless
- Ավստրալիա Vodafone
- Ավստրիա Magenta և A1
- ԱՄԷ Du
- Արգենտինա Movistar
- Բահրեյն STC
- Բելգիա Orange
- Բոսնիա և Հերցեգովինա BH Telecom
- Բրազիլիա VIVO
- Բուլղարիա Yettel
- Գերմանիա Telekom
- Դանիա Telia
- Եգիպտոս Orange
- Էկվադոր Movistar
- Էստոնիա Telia և Tele2
- Թաիլանդ DTAC
- Թայվան Chunghwa Telecom

- Թուրքիա Turkcell,Vodafone և Turk Telekom
- Իռլանդիա Vodafone և eir
- Ինդոնեզիա XL Axiata
- Իսպանիա Orange
- Իսրայել Partner
- Իտալիա Vodafone, Windtre, TIM և Iliad
- Լատվիա LMT և Tele2
- Լեհաստան Orange
- Լիխտենշտեյն Swisscom և Salt
- Լիտվա Telia և Tele2
- Լյուքսեմբուրգ Orange և Tango
- Խորվաթիա A1
- Կանադա Rogers և Bell
- Կիպրոս Epic
- Կոնգո Vodacom Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետություն
- Հարավային Կորեա KT և SK Telecom
- Հնդկաստան Airtel
- Հորդանան Orange
- Հունաստան Cosmote և Vodafone
- Հունգարիա Yettel, Vodafone և Magyar Telekom
- Ճապոնիա SoftBank
- Մալայզիա Celcom և Digi
- Մալթա Epic
- Մակեդոնիա A1
- Մեծ Բրիտանիա EE
- Մեքսիկա Movistar
- Մոլդովա Orange
- Մոնտենեգրո m:tel
- Նիդերլանդներ Vodafone և KPN
- Նոր Զելանդիա One
- Նորվեգիա Telenor և Telia
- Ծվեդիա Telenor
- Ծվեյցարիա Salt և Swisscom
- Ծրի Լանկա Dialog
- Պերու Movistar
- Պորտուգալիա Vodafone և NOS
- Ուկրաինա Lifecell
- Ուրուգվայ Movistar
- Ուզբեկստան Mobiuz
- Չեխիա O2 և Vodafone
- Չիլի Telefonica
- Չինաստան China Mobile
- Ռումինիա Orange և Vodafone
- Սաուդյան Արաբիա Zain
- Սերբիա A1 և Yettel
- Սինգապուր M1

- Սլովակիա Orange և O2
- Սլովենիա A1
- Վրաստան Magti, Silknet և Cellfie
- Վիետնամ Viettel
- Քաթար Vodafone
- Քուվեյթ Ooredoo
- Ֆինլանդիա Telia և DNA
- Ֆրանսիա Orange

Հեռախոսահամարի կարգավիճակ

Ucom Next Level ծառայությունն ակտիվանում է բաժանորդագրման պահից: Ծառայությունն ակտիվ կլինի մինչև հաջորդ ամսվա 20-ը: Ակտիվ շրջանում կարող եք զանգեր ընդունել և զանգել ցանկացած ուղղությամբ, ուղարկել և ստանալ կարճ և մուլտիմեդիա հաղորդագրություններ, օգտագործել ինտերնետ և այլ ծառայություններ: Մինչև վճարման օրը (յուրաքանչյուր ամսվա 20-ը) վճարում չկատարելու դեպքում Ձեր ծառայությունն անցնում է պասիվ շրջան: Պասիվ շրջանը տևում է մինչև ընթացիկ ամսվան հաջորդող ամսվա ավարտը: Այս շրջանում Դուք կարող եք միայն ընդունել զանգեր, ստանալ կարճ և մուլտիմեդիա հաղորդագրություններ և կատարել զանգեր անվճար հատուկ համարներին: Ի դեպ, ակտիվ ծառայությունների փաթեթները և ավտոմատ ակտիվացված առաջարկները պահպանվում են նաև պասիվ շրջանում, սակայն Դուք չեք կարող դրանք օգտագործել: Պասիվ (Ծառայության սահմանափակման ժամանակահատված) շրջանում ցանկացած պահի կարող եք վերաակտիվացնել բոլոր ծառայությունները ` պարզապես վճարելով նախորդ ամիսների պարտքը (բացասական հաշվեկշիռը և չվճարված ամսավճարները): Այնուհետև, Դուք հնարավորություն կունենաք օգտագործել սակագնային պլանի ներառումները և ավտոմատ ակտիվացված առաջարկները, եթե դրանց վավերականության ժամկետը չի լրացել:

Եթե մինչև պասիվ շրջանի ավարտը Դուք չեք վճարում գոյացած պարտքերը, ծառայության մատուցումը 1 ամիս ժամկետով սահմանափակվում է, որի ընթացքում Դուք կարող եք միայն ընդունել զանգեր, ստանալ կարճ և մուլտիմեդիա հաղորդագրություններ և կատարել զանգեր անվճար հատուկ համարներին: Այս ընթացքում Դուք դեռևս ունեք հնարավորություն վերաակտիվացնելու բոլոր ծառայությունները և օգտվելու Ձեր սակագնային պլանին համապատասխան ամբողջական ներառումներից՝ պարզապես վճարելով չվճարված ամսավճարները, առկա բացասական հաշվեկշիռը, ինչպես նաև ուշ վճարման համար սահմանված տույժերը:

Կասեցման ժամանակահատվածում Ծառայության նախորդ ամիսների պարտքն (չվճարված ամսավճարները, առկա բացասական հաշվեկշիռը, ինչպես նաև ուշ վճարման համար սահմանված տույժերը) ամբողջությամբ մարելու դեպքում Ծառայությունը վերաակտիվանում է:

Ծառայությունների կասեցման ժամանակահատվածում նախորդ ամիսների պարտքն ամբողջությամբ մարելու և միաժամանակ մինչև տվյալ օրվա ավարտը պայմանագիրը լուծելու կամ այլ սակագնային պլանի անցնելու դեպքում ընթացիկ ամսվա համար ամսավճար չի գանձվում:

Կասեցման ժամանակահատվածում նույն ամսվա 21-ից հետո վերաակտիվանալիս Բաժանորդային պայմանագիրը լուծվելու կամ այլ սակագնային պլանի անցնելու դեպքում կգանձվի տվյալ ամսվա ամսավճարի 30%-ի չափով գումար: Մինչև նույն ամսվա 20-ը Բաժանորդային պայմանագիրը լուծվելու կամ այլ սակագնային պլանի անցնելու դեպքում կգանձվի տվյալ ամսվա ամսավճարն ամբողջությամբ:

Եթե մինչև ծառայության ամբողջական կասեցման ժամանակահատվածի լրանալը պարտքն ամբողջությամբ չմարեք, Ucom-ը իրավասու կլինի միակողմանի լուծել Ձեր բաժանորդային պայմանագիրը՝ առանց Ձեզ լրացուցիչ տեղեկացնելու, Ձեր հեռախոսահամարը կարող է հատկացվել այլ բաժանորդի:

Բաժանորդային Պայմանագրի լուծումը

Բաժանորդային պայմանագիրը Բաժանորդի կամ Ucom-ի նախաձեռնությամբ լուծվելու կամ այլ սակագնային պլանի անցնելու դեպքում ընթացիկ ամսվա ամսավճարը ենթակա է ամբողջությամբ գանձման, բացառությամբ՝

- առաջին ամսվա ընթացքում Բաժանորդային պայմանագիրը լուծելու կամ այլ սակագնային պլանի անցնելու դեպքի: Տվյալ պարագայում ամսավճարը հաշվարկվում է բաժանորդագրման օրվանից սկսած մինչև ընթացիկ ամսվա ավարտն ընկած օրերի քանակին համապատասխան գումարի չափով,
- կասեցման փուլում վերաակտիվանալուց հետո նույն ամսվա 21-ից Բաժանորդային պայմանագիրը լուծվելու կամ այլ սակագնային պլանի անցնելու դեպքի: Տվյալ պարագայում կգանձվի տվյալ ամսվա ամսավճարի 30%-ի չափով գումար:

ՀՀ քաղաքացի չհանդիսացող ֆիզիկական անձանց կողմից Ucom-ի ծառայություններին բաժանորդագրվելու դեպքում ենթակա է ստորագրման նաև Դրամական միջոցների գրավի պայմանագիր: Դրամական միջոցների գրավի պայմանագրով նախատեսված գրավի առարկայի չափը յուրաքանչյուր սակագնային պլանի մասով սահմանվում է ստորև.

Հետվճարային շարժական հեռախոսակապի ծառայություններից օգտվելու դեպքում ՀՀ քաղաքացի չհանդիսացող անձինք կվճարեն ստորև աղյուսակով սահմանված չափով գումար.

Սակագնային պլան	Գումարի չափ
Next Level 3000 Next Level 4000 Next Level 5500	15.000 դրամ
Next Level 7500	25.000 դրամ